Յասմիկ Գրիգորեան, *Զանգուածները եւ Զանգուածային Բռնութիւնները. Օսմանեան Կայսրութեան Մուսուլման Բնակչութեան Մասնակցութիւնը Հայոց Ցեղասպանութեանը*, Երեւան, 2017, 244 էջ:

Ցեղասպանագիտութեան բնագաւառում ոճրագործութեան զանգուածայնութեան հիմնախնդրին անդրադարձել են հայ եւ օտար հեղինակներ[1]:

Յասմիկ Գրիգորեանի *Զանգուածները եւ Զանգուածային Բռնութիւնները. Օսմանեան Կայսրութեան Մուսուլման Բնակչութեան Մասնակցութիւնը Հայոց Ցեղասպանութեանը* մեծարժէք աշխատութիւնը կարեւոր ներդրում է հայ ցեղասպանագիտութեան մէջ:

Հայոց Ցեղասպանութեանը՝ Օսմանեան Կայսրութեան մուսուլման բնակչութեան զանգուածային մասնակցութեան հիմնահարցի ուսումնասիրութեամբ, հեղինակը նոր բացայայտումներ է կատարում եւ արդի ցեղասպանագիտութեան մէջ առաջադրում կառուցողական մօտեցումներ եւ համարձակ լուծումներ:

Անաչառ հետազօտողի բարեխղճութեամբ Գրիգորեանը, վերհանելով Հայոց Ցեղասպանութեան իրագործման նախապայմանները, պետական ու հոգեւոր գաղափարախօսութիւնները, հասարակութեան կառոյցի դերը եւ վերջինիս ընկերամշակութային ու էթնօմշակութային իւրայատկութիւնները, աղբիւրագիտական հարուստ նիւթի յենքի վրայ քննական վերլուծութեան է ենթարկել դրանք:

Հեղինակն ուսումնասիրութեան մէջ անդրադառնում է ինչպէս պետական կառոյցների, այնպէս էլ մուսուլման բնակչութեան ընկերային տարբեր խմբերի՝ տղամարդկանց, կանանց ու երեխաների մասնակցութեան ձեւերին եւ գործառութային առանձնայատկութիւններին:

Ուսումնասիրելով ցեղասպանութիւնների իրագործման մեխանիզմները՝ Գրիգորեանն իրաւացիօրէն նկատում է. «*Խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացման համար անհրաժեշտ է հասարակութեան անմիջական մասնակցութիւնը կամ առնուազն ակտիւ աջակցութիւնը: Այս հանգամանքը ենթադրում է հասարակութեան տարբեր սոցիալական եւ սեռատարիքային խմբերի համոզմունքների, մտայնութիւնների, բռնութիւններին մասնակցելու նրանց նպատակների ու շարժառիթների ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը*»[2]:

Ուսումնասիրութեան ներածութիւնը՝ «Բրաունինգ-Գոլդհագէն Բանավէճը Բռնութիւններին Զանգուածային Մասնակցութեան Ուսումնասիրութեան Առանցքում» ամերիկացի պատմաբաններ Քրիստոֆըր Բրաունինգի եւ Դանիէլ Գոլդհագէնի աշխատութիւնների քննական վերլուծութիւնն է: Գրիգորեանի խորին համոզմամբ՝ Հոլոքոստին նուիրուած վերոյիշեալ

աշխատութիւնները մեծ ներդրում են ցեղասպանութիւնների իրագործմանը հասարակութեան մասնակցութեան քննարկման տեսանկիւնից:

Վերոյիշեալ հեղինակները 101րդ պահեստային ոստիկանական գումարտակի օրինակով ուսումնասիրել են նրանց ներգրաւածութեան դրդապատճառները եւ յանգել հակադիր եզրայանգումների: Ներածութեան մէջ կարդում ենք. «*Ք. Բրաունինգը, 101րդ ոստիկանական գումարտակի օրինակով քննութեան առնելով Հոլոքոստին հասարակութեան շարքային անդամների ներգրաւուածութեան դրդապատճառները, յանգում է այն եզրակացութեան, որ նրանք մասնակցել են հրեաների զանգուածային ոչնչացմանն առանց յատուկ գաղափարական եւ հոգեբանական նախապատրաստման*»[3]: Իսկ Գոլդհագէնի հաղորդմամբ՝ Հոլոքոստի ոճրագործները յաճախ գերակատարել են ստացուած հրամանները, քանի որ գործել են նոյնիսկ անմիջական վերահսկողութեան բացակայութեան պայմաններում, կամաւոր եւ չպարտադրուած դաժանութեամբ[4]:

Բրաունինգ-Գոլդհագէն բանավէճը Գրիգորեանը կարեւորում է նրանով, որ Գոլդհագէնի աշխատութիւնը եւս հիմնուած է 101րդ պահեստային ոստիկանական գումարտակի անդամների՝ յետպատերազմեան դատավարութիւնների հարցաքննութեան նոյն նիւթերի վրայ[5]: Հեղինակը գրում է. «*Կարծես թէ տեղի ունեցաւ գիտնականների բաժանում երկու խմբաւորումների՝ նրանք, ովքեր ցեղասպանութեան իրագործումը պայմանաւորում են պետական գաղափարախօսութեամբ, եւ նրանք, ովքեր մերժում են այս մօտեցումը*»[6]:

Ուսումնասիրութեան առաջին՝ «Հայոց Ցեղասպանութեան Ժամանակ Տեղ Գտած Բռնութիւնների Զանգուածայնութեան Հիմնախնդրի Ազգաբանական Կտրուածքները» գլխում, հեղինակն առաջադրելով մի շարք խնդիրներ՝ անդրադարձ է կատարում Օսմանեան պետական գաղափարախօսութեան գործօնին, մշակութային մոդէլների ձեւաւորման հիմնական դրոյթներին եւ տարածման մեխանիզմներին: Հեղինակն այս գլխում ներառել է նաեւ «օտարի» թիրախայնացման, ապամարդկայնացման, «թշնամու» կերպարի ձեւաւորման մեխանիզմները, ինչպէս նաեւ շեշտադրել հոգեւոր գաղափարախօսութեան գործօնը:

Միանգամայն իրաւացի է Գրիգորեանը, երբ ցեղասպանութեան իրագործման գործընթացում հասարակական լայն զանգուածների ներգրաւման ենթահողում, յատկապէս բազմակրօն եւ բազմէթնիկ հասարակութիւններում, կարեւորում է «իւրային/օտար» մշակութային մոդէլի դիտարկումը տուեալ հասարակութեան աշխարհընկալման համակարգում. «*Այլատեցութեան արդիւնք հանդիսացող բռնութեան կիրառման համար կարեւոր է, թէ ինչպէս է «օտարի» կերպարը մեկնաբանւում պետական գաղափարախօսութեան մէջ, ինչ տեղ է*

զբաղեցնում ոճրագործների աշխարհընկալման համակարգում, ինչ նախնական վերաբերմունք գոյութիւն ունի նրա նկատմամբ, եւ ինչ վերածեւաւորման է ենթարկւում այն՝ ազգային ինքնագիտակցութեան ձեւաւորման կամ յստակեցման գործընթացում»[7]:

Հեղինակը համոզուած է, որ ապստամբութեան եւ դաւաճանութեան մէջ հայերին մեղադրելը թուրքական ժխտողական քաղաքականութեան առաջին քայլերն էին, որոնք մինչ այսօր պաշտօնապէս շարունակւում են Թուրքիայի Հանրապետութեան կողմից. «*Ի վերջոյ այսպիսի մեղադրանքների տարածումը եւ բազմաթիւ թռուցիկներով հայերին սպանելու կոչեր անելը, սեփական մեղքը կամ յանցանքն ուրիշներին վերագրելը, զրպարտութիւնը եւ առհասարակ ագրեսիայի ցանկացած դրսեւորում վիկտիմիզացման այլընտրանքային ձեւեր են*»[8]:

Ամփոփելով հետազօտութեան առաջին գլխի արդիւնքները՝ Գրիգորեանը յանգում է եզրակացութեան, որ բազմէթնիկ ու բազմակրօն Օսմանեան Կայսրութիւնում հայ ժողովրդի նկատմամբ իրագործուած ցեղասպանութեան գլխաւոր յենքը պանթիւրքիզմի գաղափարախօսութիւնն էր, որը ձգտում էր ձեւաւորել յատկապէս թիւրքական մշակոյթի վրայ հիմնուած էթնօազգայնականութիւն: Ազգային ինքնագիտակցութիւնը («մենք» մոդէլը), մշակոյթի վերածննդի գործընթացները յանգեցրին հայերի ցեղասպանութեանը, քանի որ ընթանում էին էթնիկական միատարրութիւն ստեղծելու եւ գերակայութիւն ձեռք բերելու քաղաքականութեամբ:

Երկրորդ՝ «Պետական Կառոյցների Մասնակցութիւնը Հայոց Ցեղասպանութեանը», գլխում հեղինակը սկզբնաղբիւրային հարուստ գրականութեան յենքի վրայ ներկայացնում է պետական կենտրոնական եւ տեղական կառավարման մարմինների մասնակցութեան դրսեւորումները:

Առանձին ենթագլխում Գրիգորեանն անդրադառնում է պետական ռազմական կառոյցների մասնակցութեանը, օսմանեան բանակի ներգրաւուածութեանը, ոստիկանութեան եւ պահակագնդերի գործողութիւններին:

Հեղինակը յորդորում է չմոռանալ, որ ցեղասպանութիւն իրագործելու նպատակով ստեղծուող ռազմականացուած մարմինները համալրւում էին նաեւ շարքային քաղաքացիներով[9]:

Քննարկուող հիմնահարցն առաւել ընդգրկուն եւ ամբողջական դարձնելու նպատակով՝ հեղինակն ուսումնասիրել եւ աշխատանքի մէջ ներառել է քրէական յանցագործների ներգրաւուածութեան հարցը Հայոց Ցեղասպանութեան իրականացման գործում: Այս առնչութեամբ հետաքրքիր է Գրիգորեանի հետեւեալ մեկնաբանութիւնը. «*Քրէական յանցագործներին ազատ արձակելու եւ ռազմականացուած ինստիտուտ ներգրաւելու հանգամանքը նպաստում էր մուսուլման բնակչութեան՝ զանգուածային*

բռնութիւններին ու սպանութիւններին ինտեգրմանը: Այս գործընթացը դիւրացնելու եւ անպատժելիութեան մթնոլորտ ձեւաւորելու համար բռնութիւններ գործադրելու նպատակով վարձում էին այնպիսի մասնագիտութիւն ունեցող մարդիկ, ովքեր կարող էին հեշտութեամբ սպանութիւններ կատարել»[10]:

Կառավարութեան յատուկ հրամանով օսմանեան բանակի ներգրաւուածութիւնը՝ Հայոց Ցեղասպանութեանը, հեղինակը հաստատում է վերապրողների եւ օտարերկրեայ դիւանագէտների վկայութիւններով եւ փաստաթղթերով. «... *Բացի նրանից, որ կայսերական բանակի զինուորները չէին կարող շրջանցել հրամանները, չի բացառում, որ նրանք գտնում էին սպայական անձնակազմի՝ պանթիւրքական գաղափարախօսութեան անմիջական քարոզչութեան ներքոյ»*[11]:

Ոստիկանների, պահակագնդերի, զինուորների, ինչպէս նաեւ իրական քրէական յանցագործների մասնակցութիւնը ցեղասպանութեանը լուծում էր մի շարք կարեւոր խնդիրներ՝ որքան հնարաւոր է հասարակութեան մեծ մասին ներգրաւել զանգուածային բռնութիւններ իրականացնող մարմինների մէջ, կազմակերպել եւ վերահսկողութիւն սահմանել տեղահանութեան եւ ցեղասպանութեան իրագործման ընթացքի վրայ: Միաժամանակ բռնութիւնների մէջ ներգրաւուած էթնօլեզուական տարբեր խմբերի համար ստեղծում էր թրքութեանը հաւասարութեան պատրանք, նրանք ինքնահաստատում էին որպէս վստահելիներ եւ ուրեմն՝ հաւասարներ[12]:

Յաջորդ՝ երրորդ գլուխը («Հասարակութեան 'Շարքային' Անդամների Մասնակցութիւնը Հայոց Ցեղասպանութեանը») Գրիգորեանը շարադրել է՝ ելնելով մուսուլման տղամարդկանց, կանանց եւ երեխաների մասնակցութեան առանձնայատկութիւններից:

Հեղինակն ի սկզբանէ նշում է, որ բռնութիւններին հասարակութեան մասնակցութեան զանգուածայնութիւնը պայմանաւորող եւ յատկապէս «շարքային քաղաքացիների» ընդգրկման դրդապատճառներից մէկը նաեւ կողոպուտի լայն հնարաւորութիւնն էր, որը ստեղծում եւ խրախուսում էր իշխանութեան կողմից[13]:

Գրիգորեանն անդրադարձել է բռնութեան մի շարք ձեւերին եւ դրանց մշակմանը, այդ թւում նաեւ ծիսականացուած սպանութիւններին եւ սեռական բռնութիւններին: Ինչ վերաբերում է բռնութեան ձեւերի յատուկ մշակմանը, ապա հետազօտողը փաստում է. «...*Բռնութեան դաժանացումը պայմանաւորուած էր ոչ միայն այն հանգամանքով, որ մեծմասամբ կիրառում էր սառը զէնք, այլեւ իր մէջ կրում էր նաեւ գաղափարական իմաստ: Քանի որ Հայոց Ցեղասպանութիւնն իրագործողներն ունէին այն խոր համոզմունքը, որ ոչնչացնում են մանրէներին, իրենց բոլոր դժբախտութիւնների մեղաւորներին՝ յանուն հայրենիքի ամբողջականութեան եւ*

ազգային ինքնութեան ձեւաւորման/պահպանման, իրենց մուսուլման եղբայրների հետ վերամիաւորման, ապա բռնութեան դաժանացումը, բռնարարքների ձեւերը դառնում էին թոյլատրելի վարքային նորմեր: Այսպիսի բռնութիւնները հիմնուած են մշակութային համակարգի վրայ եւ ունեն կառուցողական բնոյթ, քանի որ միտուած են ինքնութեան պահպանմանը՝ օտար մշակոյթների մերժման կամ ոչնչացման միջոցով[14]»:

Գրիգորեանն ուսումնասիրութեան այս գլուխն ամփոփում է հետեւեալ եզրակացութեամբ. «*Չնայած այն հանգամանքին, որ բռնաբարութիւնները եւ սեռական բռնութիւնների այլ ձեւեր յայտնուել են միջազգային հանրութեան ուշադրութեան կենտրոնում Ռուանդայում եւ նախկին Հարաւսլաւիայում տեղի ունեցած ցեղասպանութիւններից յետոյ, այնուամենայնիւ դրանք՝ որպէս ցեղասպանութեան իրականացման «գործիք», կիրառուել են նաեւ Հայոց Ցեղասպանութեան համատեքստում եւ կրել զանգուածային բնոյթ*»[15]:

«'Երախտաւորների' Հիմնախնդիրը Հայոց Ցեղասպանութեան Մէջ» վերջին՝ չորրորդ գլխում հեղինակը նախ վերլուծում է հիմնախնդիրն արդի ցեղասպանագիտութեան ենթահողում, ապա անդրադառնում մուսուլման հասարակութեան մէջ պետական մակարդակով «երախտաւորութեան» դրսեւորումներին եւ դրանց դրդապատճառներին:

Գրիգորեանը հաստատում է. «*Հայոց ցեղասպանութեան ժամանակ բազմաթիւ կանայք եւ երկսեռ երեխաներ առեւանգւում կամ գնւում էին մուսուլմանների կողմից: Կանայք համալրում էին հարէմները, ծառայում տնային տնտեսութիւնում, յատկապէս փոքր երեխաները զբաղւում էին հիմնականում հօտաղութեամբ: Երբեմն հայ մայրերն իրենք էին տալիս իրենց երեխաներին՝ այդպիսով փորձելով փրկել նրանց մահից: Այս ճանապարհով յաջողւում էր ողջ մնալ երբեմն նաեւ տղամարդկանց: Ահա այս երեւոյթը թուրքական ժխտողական քաղաքականութեան ծիրում յաճախ փորձում են մեկնաբանել որպէս մուսուլմանների կողմից քրիստոնեաներին փրկելու ջանքեր՝ նրանց ներկայացնելով որպէս «երախտաւորներ», որի վերաբերեալ վերջին շրջանում բաւական ակտիւ քննարկումներ են տեղի ունենում*»[16]:

Երեւոյթը որակելով բաւական բարդ՝ Գրիգորեանն անհրաժեշտ է համարում դիտարկել «երախտաւորների» հիմնախնդիրը համակողմանի եւ աղբիւրագիտական հարուստ նիւթի հիման վրայ՝ առաջ քաշելով հետեւեալ հարցադրումները՝ ի՞նչ հիմքերով, մտադրութեամբ եւ նպատակներով է կազմակերպւում նման վարքը, ովքե՞ր են 'փրկողները'[17]:

Տեղին է մէջբերել հեղինակի հետեւեալ եզրակացութիւնը. «*Օսմանեան Կայսրութիւնում Հայոց Ցեղասպանութեան համատեքստում մուսուլման հասարակութեան տարբեր խմբերի կողմից «ալտրուիստական» վարքի*

կազմակերպման դրդապատճառների ու նպատակների դիտարկումները բացայայտում են, որ բարոյական հոգեբանութեան գործօնը գրեթէ դեր չի ունեցել «փրկողների» վարքի համար: Մուսուլման հասարակութեան կողմից երախտաւորութեան դրսեւորման հիմքերը, թերեւս, պէտք չէ փնտռել համամարդկային բարոյական, մշակութային, կրօնական կամ էթնիկական պատկանելութեան համատեքստում, այլ աւելի նեղ շրջանակներում, ինչպիսիք են, օրինակ, նիւթական շահի, հարկադիր աշխատանքի, սեռական շահագործման, ամուսնութեան, դրացիական յարաբերութիւնների, երախտագիտութեան զգացումների, փոխադարձ ակնկալիքի մէջ, քանի որ նման վարք հիմնականում կազմակերպուել է անհատական նախաձեռնութեամբ եւ նպատակներով»[18]:

Գրիգորեանը համոզուած է, որ Օսմանեան Կայսրութիւնում պետական մակարդակով դրսեւորուած «երախտաւորութիւնը» հետապնդում էր բացառապէս քաղաքական նպատակներ. «*Թուրք եւ թուրքամէտ հեղինակները, պաշտօնատար անձանց վարքը ներկայացնելով բացառապէս հումանիտար նպատակներով, հաւանաբար փորձում են մեղմացնել նրանց մեղսակցութիւնը հայերի դէմ գործադրուած ցեղասպանութեան յանցագործութեան մէջ եւ հիմնական պատասխանատուութիւնը թողնել կենտրոնին*»:[19]

Սկզբնաղբիւրային հարուստ գրականութեան յենքի վրայ ինքնատիպ լեզուամտածողութեամբ շարադրուած ուսումնասիրութիւնը եւ յատկապէս հեղինակի եզրակացութիւնները վկայում են երիտասարդ հետազօտողի բանիմացութեան եւ կուռ տրամաբանութեան մասին:

Գրիգորեանի աշխատութիւնը կարեւոր ներդրում է ոչ միայն Հայոց Ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան, այլեւ ընդհանրապէս ցեղասպանագիտութեան տեսանկիւնից: Այն Հայոց Ցեղասպանութեան օրինակով այլ ժողովուրդների ցեղասպանութիւնների ուսումնասիրութեան հարցերով զբաղուող հետազօտողների համար ծանրակշիռ հիմնանիւթ է: Այս մեծարժէք ուսումնասիրութեան շնորհիւ բացայայտւում է Օսմանեան Կայսրութեան մուսուլման բնակչութեան հաւաքական կերպարը:

Այս ուսումնասիրութիւնն ապացուցում է, որ Հայոց Ցեղասպանութիւնն իրագործուեց պետութիւն-մուսուլման հասարակութիւն փոխհամաձայնեցուած եւ համակարգուած համագործակցութեամբ:

Եւ ինչպէս ամրագրուած է Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին 1948 Դեկտեմբերի 9ի Ուխտի 6րդ յօդուածում «*Այն անձինք, որոնք մեղադրւում են ցեղասպանութիւն կամ 3րդ յօդուածում թուարկուած որեւէ արարք կատարելու մէջ, դատւում են այն երկրի իրաւասու դատարանի կողմից, որի տարածքում կատարուել է այդ յանցագործութիւնը, կամ այնպիսի միջազգային քրէական դատա-*

ռանի կողմից, որը կարող է իրաւազօրութիւն ունենալ սոյն Ուխտի՝ այդ իրաւազօրութիւնը ճանաչած կողմերի նկատմամբ»[20]:

Այսպիսով, Հայոց Ցեղասպանութեան ծանրագոյն յանցագործութեան համար պատասխանատուութիւն էր կրում նաեւ Օսմանեան Կայսրութեան մուսուլման յանցաւոր բնակչութիւնը:

ԹԵՀՄԻՆԷ ՄԱՐՏՈՅԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Յովհաննէս Ինճիկեան, *Սոցիալական Հոգեբանութիւնը եւ Ցեղասպանութիւնը*, Երեւան, 1995. նաեւ՝ А. Авакян, *Геноцид 1915г.: Механизмы Принятия И Исполнения Решений* (1915ի Ցեղասպանութիւնը. մեքենականութիւնները, առնուած որոշումներու գործադրութիւնը), Երեւան, 1999. նաեւ՝ V. Dadrian, "Children as Victims of Genocide: the Armenian Case," *Journal of Genocide Research*, 2003, Vol. 5, No. 3, September, էջ 421-37. նաեւ՝ V. Dadrian, "The Role of the Turkish Military in the Destruction of Ottoman Armenians: A Study in Historical Continuities," *Journal of Political and Military Sociology*, 1992, Vol. 20, No. 2, էջ 257-88. նաեւ՝ V. Dadrian, "The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians," *Holocaust and Genocide Studies*, 1986, Vol. 1, No. 2, էջ 169-92. նաեւ՝ V. Dadrian, "The Secret Young-Turk Ittihadist Conference and Decision for the World War I Genocide of the Armenians," *Holocaust and Genocide Studies*, 1993, Vol. 7, No. 2, էջ 173-201. նաեւ՝ D. Goldhagen, *Hitler's Willing Executioners. Ordinary Germans and the Holocaust*, New York, Vintage Book, 1996. նաեւ՝ D. Goldhagen, *Worse than War: Genocide, Eliminationism, and the Ongoing Assault on Humanity*, New York, Public Affairs, 2009. նաեւ՝ Ch. Browning, *Ordinary Men. Reserve Police Battalion 101 and the Final Solution in Poland*, London, Published by the Penguin Books, 2001.

[2] Յասմիկ Գրիգորեան, *Զանգուածները եւ Զանգուածային Բռնութիւնները. Օսմանեան Կայսրութեան Մուսուլման Բնակչութեան Մասնակցութիւնը Հայոց Ցեղասպանութեանը*, Երեւան, 2017, էջ 205:

[3] Գրիգորեան, էջ 23:

[4] Նոյն, էջ 28:

[5] Նոյն, էջ 24:

[6] Նոյն, էջ 33:

[7] Նոյն, էջ 35-6:

[8] Նոյն, էջ 62:

[9] Նոյն, էջ 93:

[10] Նոյն, էջ 96:

[11] Նոյն, էջ 110:

[12] Նոյն, էջ 119:

[13] Նոյն, էջ 123:

[14] Նոյն, էջ 125:

[15] Նոյն, էջ 139:

[16] Նոյն, էջ 175:
[17] Նոյն:
[18] Նոյն, էջ 203:
[19] Նոյն տեղում:
[20] *Մարդու Իրաւունքների Վերաբերեալ Հայաստանի Հանրապետութեան Մասնակցութեամբ Միջազգային Պայմանագրեր, Փաստաթղթերի Ժողովածու, Գիրք Բ.*, Երեւան, 2001, էջ 11: